

# ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄ

Առողջ և բարձր մթերատու կենդանիներ ունենալու գործընթացում շատ մեծ դեր է խաղում նորածին հորթերի ճիշտ կերակրումը, հատկապես կյանքի առաջին շաբաթվա ընթացքում:

Խիժը պետք է տալ օրական 3-5 անգամ և ամեն անգամ 1.5լ-ից ոչ ավել, որպեսզի շրդանը չզերյցվի:

**Հորթի ծնվելուց հետո 40 րոպեն չլրացած հորթին պետք է կերակրել խիժով, քանի որ նորածնի աղիքները ծնվելուց հետո առաջին մի քանի ժամերի ընթացքում միայն կարող են խիժի մեջ առկա հակամարմինները անփոփոխ ներծծել արյան մեջ:**

Հորթի կյանքի առաջին օրերին պետք է փալ 5-6լ խիժ 37-39°C:

## Առաջին օրվա կերակրման գրաֆիկ

ԽԻԺԻ ԲԱՆԱԿԸ (լ)	ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ժամ)			
	ծնվելուց անմիջապես հետո	4 ժամ անց	12 ժամ անց	մինչև 24 ժամը լրանալը
	1	1	1.5	1.5

Հիվանդություններից զերծ մնալու համար հենց սկզբից հորթին պետք է կերակրել ծծակով:




4-5 օրական հորթերին պետք է սովորեցնել նաև այլ կերերի, իսկ 15 օրականում հորթն արդեն պետք է կարողանա ուտել նաև խոտ ու համակցված կեր: Մաքուր ջուրը և քար աղը 3-4 օրականից սկսած մշտապես պետք է լինեն հորթի դիմաց:

## Կերային ռացիոն փարբեր փարիքային խմբերի հորթերի համար (1 օրում 1 գլխին)

ԿԵՐԻ ՏԵՄԱԿԸ	ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ				
	1 ԱՄՍԱԿԱՆ	2 ԱՄՍԱԿԱՆ	3 ԱՄՍԱԿԱՆ	4 ԱՄՍԱԿԱՆ	5 ԱՄՍԱԿԱՆ
ԿԱԹ (լ)	5	4	-	-	-
ԱՌՎՈՒՅՏԻ ԽՈՏ (կգ)	ըստ պահանջի	0.5	2	2.5	4
ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐ (կգ)	ըստ պահանջի	1	1.2	1.5	2
ԱՐՄԱՏԱՊԱՆԱՐԱՊՏՈՒՂ (կգ)	-	ըստ պահանջի	0.5	1	1
ԿԵՆԳԱՆԻ ՔԱՇՆ ԱՄՍՎԱՎԵՐՉՈՒՄ (կգ)	50-55	70-75	90-95	110-115	130-135

Դեռևս կաթնակեր հորթերի կերակրման համար պետք է կիրառել մինչև 2լ տարողությամբ շիշ կամ հատուկ դուլ ծծակով, որի վրայի անցքը պետք է համապատասխանի մայրական պտկի անցքին: Այս պարագաներով կերակրելու առավելություններն են՝

- կարգավորվում է հորթի ընդունած կաթի չափաբաժինը
- հորթը չի շփվում մոր կեղտոտ կրծի հետ, և ախարածին միկրոբները չեն անցնում հորթի օրգանիզմ
- կանխարգելվում են մաքրաշին հատուկ փարբեր հիվանդությունները:

 Schweizerische Eidgenossenschaft  
Confédération suisse  
Confederazione Svizzera  
Confederaziun svizra

Swiss Cooperation Office  
South Caucasus

 SDA Strategic Development Agency  
Strategies for Development